ეროვნული ბიბლიოთეკა

№ 60 ՈՒՐԲԱԹ, 21 ՄԱՐՏԻ ԵՐԿՐՈՐԴ 1919 ՏԱՐԻ ՈՒՐԲԱԹ, 21 ՄԱՐՏԻ № 60

ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

Օրգան Հայ Ժողովրդական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի

Խմբագրութիւնը բաց է ամեն օր առ. ժամը 9-ից մինչև 3-ը։ Յօդուածները պէտք է գրուած լինեն պարզ և մի երեսի վրայ։ Յօդուածները կարող են ենթարկուել փոփոխման և կրճատման։ Ընդունուած յօդուածները, որոնց տակ չէ գրուած վարձատրութեան պահանջ՝ կը համարուեն ձրի։

ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ

Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուով առաջին երեսում 75 կոպ., իսկ վերջին երեսում՝ 50 կոպ. Բժիշկների և աշխատանք փնտրողների համար որոշ զեղչ։ Մահազդի համար 15 ռուբլի։ Յայտարարութիւնները նոյն օրուայ թերթի համար ընդունւում են մինչև ժամը 2-ը։

ԿԱՐԵՒՈՐ ԼՈՒՐԵՐ

Հայոց գոյքերի վերականգնումը Կ. Պոլսում

Լուրեր Թիւրքիայից

Զապէլ Եսայեանի յօդուածը Հայերի մասին

Վիլսոնի ժամանումը Պարիզ

Հելիոլանդի ամրութիւնները պիտի քանդուեն

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹ.

1919 թ.

ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ

ՕՐԱԹԵՐԹԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է.

1 ամիսը	10 ռուբ.
3 »	25 »
Հատավաճառ	1 ռուբ.

Հասցէն՝ Тифлисъ, Головинскій пр. № 41.

Գրասենեակը բաց է ամեն օր առաւ. ժամը 9-ից մինչև 3-ը, բացի կիրակի և տօն օրերից։ Телефонъ 16—90.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՖՐԱԿՑԻԱ

Կիրակի, մարտի 23-ին

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Ի ՊԱՏԻՒ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ և ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԲԷԼԵԱՆԻ

Կը կայանայ

ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

ԵՐԵԿՈՅԹ-ԲԱԼ

Սկիզբը երեկ. ճիշտ ժամը 8-ին

Տոմսերը վաճառւում են Սուլթանաճեանի խանութում (Երև. հր.)։ 4-2

ՂԱՐԱԲԱՂԻ

ներկայ կացութեան քննութեան մասին հրաւիրւում է

ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՈՎ,

որ տեղի է ունենալու կիրակի օրը, ժամը 12-ին, ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ընկերութեան համերգային դահլիճում։

Ժողովի օրակարգն է.

Լէօ, Բացման խօսք։
Վ. Նաւասարդեան, Պատմական ակնարկ Ղարաբաղի մասին։
Անանուն, Ղարաբաղը, որպէս տնտեսական միաւոր։
Ն. Սարգսեան, Ղարաբաղի աշխարհագրական կազմը։
Սաքօ Սահակեան, Ղարաբաղի քաղաքական կացութիւնը։
Մ. Ղարաբէկեան, Ղարաբաղցին յեղափոխութեան մէջ։
Գ. Տէր-Ղազարեան, Ղարաբաղի քաղաքակրթական դերը։

Մուտքի համար ՁՐԻ տոմսակներ տրւում են «Մշակ»-ի (Гановская, 3), «Աշխատաւոր»-ի (Лермонтовская, 12), «Ժողովրդի Ձայն»-ի (Головинскій пр., 41), «Кавказское Слово»-ի (Барятинская, 6) խմբագրատներում և «Саламандра»-ի գրասենեակում (Эриванская пл., домъ Купеческаго Банка)։

3—1 Ղարաբաղի եւ Զանգեզուրի Հայրենակցակ. Միութ. Վարչութ.

ԲԱԳՈՒԻՑ ՎԵՐԱԴԱՐՁԱԾ

ԱՆՏՈՆ ՄԱՅԻԼԵԱՆԸ

իր առաջին խմբական ՀԱՄԵՐԳԻ համար հրաւիրում է երգիչ-երգչուհիներ։ Առաջին փորձը տեղի կունենայ Գայեանեան դպրոցում՝ կիրակի, ժամը 4-ին. 1—1

ԹԻՖԼԻՍՈՒՄ

գտնուող Հայաստանի լուսաւորութեան մինիստր Գ. Մելիք-Ղարագիօզեանը ընդունում է մինիստրութեան գործերով ամենայն օր ժամը 10—12, իր բնակարանում, Աւճալեան հրապարակ, № 8, (Չերքեզովի փողոցի № 59-ի անկիւնից դէպի վեր, այգու դիմաց)։ 0—6

ԲԺԻՇԿ

ԳՐ. Յ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Նախկին ասիստենտ Ժընևի համալսարանի կլինիկաների և պրոֆես. Oltramare-ի վեներական հիւանդութիւնների մասնագիտական բուժարանի։

ՆԵՐՔԻՆ և ԿԱՆԱՆՑ հիւանդութիւն. մասնագէտ ՎԵՆԵՐԱԿԱՆ (ՍԻՖԻԼԻՍ, ներարկումն «606»-ի և «914»-ի), ՄԻԶԱՄԵՌԱԿԱՆ (ՀԻՆ և ՆՈՐ ՏՐԻՊԵՐ և նրա կոմպլիկացիաները) և ԿԱՇՈՒԻ ցաւերի։

Էլեկտրաբուժական կաբինետ

Ընդունելութիւնն ամեն օր, առաւ. ժ. 10-ից 1-ը, երեկ. 4-ից 6-ը։ Կիրակի օրերը միայն ժ. 12-ից 1-ը։ Կիրոչնայա, № 11։ 100—62

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆ

Նախկին ասիստենտ Բեռլինի եւ Մոսկուայի համալսարանների կլինիկաների։ Մասնագէտ ներքին հիւանդութիւնների—թոքախտի և սրտի. ընդունելութիւնը՝ իր բնակարանում և լոյսի ու էլէքտրօբուժական կաբինետում։ Հետազօտութիւնը և բուժումը X ճառագայթներով։ Ամեն օր, 9—1 և 5—8 ժամը երեկ. Բեհրուտովսկայա փ., № 23, Հեռ. 7—92։ 100—71

ԲԺՇԿԱՊԵՏ

Յ. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ

(Նախկին Դաւոսի սանատորիայի ասիստենտ)։

Ներքին և երեխայոց հիւանդութիւնների մասնագէտ, թոքերի և սրտի հիւանդ.։ Ընդունելութիւնը ամեն օր երեկոյեան ժամը 5—7-ը։ Սոլոլակ, Թոխչևսկայա 3, հեռ. 16—69։ ա. օ.) 100—61

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ

Կ. Պոլսի թերթերից մէկում («Ճակատամարտ», փետր. 22) տպուած է հետևեալը.—

«Կոմիտաս վարդապետի անմիջական ապաքինման յատկացնելու նպատակով, Գուրուչէշմէի «Կոմիտաս» երգչախումբի նախաձեռնութեամբ համերգ մը տեղի պիտի ունենայ մարտ. 2-ին, կիրակի օրը»...

Եւ այսպէս, դժբախտաբար, ըստուգւում է տաղանդաւոր այդ արուեստագէտի հիւանդութիւնը, ապա մանաւանդ, նիւթական այնպիսի անձուկ դրութիւնը, որ հարկ է տեսնուել մի համերգ տալ և արդիւնքը յատկացնել նրա ապաքինմանը։

Կոմիտաս վարդապետի մասին խօսել՝ կը լինէր կրկնել այն, ինչ շատերը և գրեթէ ամենքը գիտեն Կովկասում։

Փաստն այն է, որ նա հիւանդ է այժմ և նիւթական նեղ դրութեան մէջ։ Օգնել պէտք է։ Օգնել կարող են ամենքը, բայց այդ պարտաւորութիւնն ամենից առաջ և շատ աւելի ընկնում է Հայաստանի լուսաւորութեան նախարարութեան, ապա՝ Հայկազեան ընկերութեան և վերջապէս մեր ուրիշ ընկերութիւնների վրայ եւս։

Այդ իսկ պարտաւորութիւնն է, որ յիշեցնում եմ ես և հրաւիրում կատարելու՝ հնար եղածին չափ շուտով։

Մեղք է և ամօթ՝ թողնել արուեստագէտին համերգներից գոյացող արդիւնքներին սպասելու։ Ճնշուած սրտով է, որ մարդ կարդում է արուեստագէտներին այդ ձևով օգնելու ազդերը լրագիրների մէջ։

Վ. Փափազեան

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Է.

Աճող թանգութիւնը

Աճող թանգութիւնը Թիֆլիսում այնպիսի սպառնական չափեր է ընդունել, ինչպիսին երբեք չի եղել. հացի գներն օրըստօրէ առասպելի գիրկն են գլորւում. շուկայից արագութեամբ չէզոքացւում են նոյնիսկ գարու և եգիպտացորենի պարկերը, կաղինը, ընկոյզը և այն ամենը, որ կարող են սնունդի տեղ ծառայել սովամահ ժողովրդին։

Եթէ ցորենի ճանապարհները փակուել են և դատարկ են սպեկուլեանտների պահեստները, ապա այդպիսի խրողութեան դէմ բողոքում են իւրաքանչիւր քայլափոխում պզզած հացի լի կրպակները։

Եթէ իրօք այսուհետև նոյն առատութեամբ հաց չպիտի թափուի շուկայում, բայց չէ որ մինչ այդ եղած պաշարները գործադրուելու են հասարակութեան կարիքներին. այդ ինչպէս է, որ թանգ գնով կայ, սակայն նոյն առաջուայ գնի դիմաց չքանում է ամեն մի կենսամթերք։

Քաղաքային վարչութեան անկարողութիւնն է, որ բացակայում է թանգութեան առաջին իսկ հեղինակների վրայից, ապա հետևողականութիւնը բազմապատկած թափով արդէն օրէնք է անցած ամենամանր վաճառողի համար։

Եթէ մի վայրկեան ընդունենք, որ այդ այդպէս էլ պէտք է լինի, որ իւրաքանչիւր հացթուխ իրաւունք ունի մէկին տասն աւելացնելու, երբ ականջին հեռաւոր քամու մի ալիք հաղորդի, թէ Հնդկաստանում կամ Աւստրալիայում արդէն հացի կրիզիս է, ապա ինչ ասել լոբու, սիսեռի, կանաչեղէնի, կաղնի ու ընկոյզի գների մասին, որոնցով լցնւում է աղքատի սոված որկորը։

Պարոնայք վաճառականներ, կառավարութեան բռունցքը չէ, որ կոչուած է ձեր անյագուրդ ախորժակը փակելու. մարդկային խղճմտանքն ամենահզօր կանոնն է, որ ձեր սպեկուլեանտի ոգին փարել է իրենից. սովի սպառնալիքը կանգնած է դէմ առ դէմ ժողովրդի լայն հատուածի առաջ. սկսւում են մահացութիւնները փողոցներում, բաց երկնքի տակ։ Եթէ ոչ «հայ» կոչուող այդ ցեխաշաղախի, գոնէ միւս մթերքների վրայ, որոնց հայրենիքը սահմանից այն կողմը չէ, թողէք նախկին գները. թող այդ «զոհաբերութիւնը» ձեր կողմից լինի մի ճանապարհ, որով պիտի փրկուի մարդկութեան մեծագոյն հատուածը։

Հ. Պետ.

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

—o—

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՊՐՈՏԵԿՏՈՐԱՏ

—

Պարիզից ստացուած վերջին տեղեկութիւնների համաձայն, Պարիզի իրազեկ շրջանակների մէջ կարծւում է, թէ ապագայ հայկական անկախ պետութիւնը պիտի մնայ Ամերիկայի վերին հսկողութեան տակ (պրոտեկտորատ)։ Վենիզելոսը պաշտպանել է նոյն տեսակէտը պարզելով իր յիշատակագիրը հաշտութեան համաժողովի առջև։

(«Ճակատ.»)

ՓՈԽԱԴԱՐՁ ՎՐԷԺ

Արդեօք հայերը, երբ անկախութիւնը ստանան, պիտի մտածեն փոխադարձ վրէժի մասին։

Այդ հարցի վերաբերութեամբ ահա ինչ է գրում Պոլսի ֆրանսերէն «Ռընէսանս» թերթը.—

«Հայերը, դարերի ընթացքում ցոյց են տուել իրենց յատկութիւնների չափը։ Այս ուժեղ, բայց խաղաղ և աշխատող ժողովուրդը շատ լաւ ըմբռնել է քաղաքացիական ազատութեան իմաստը մանաւանդ նրա համար, որ կանոնաւորապէս զրկուած եղաւ այդ ազատութիւնից՝ իր երկար մարտիրոսութեան ընթացքին։ Նա գիտէ թէ ինչ բան է պակասում իր երջանկութեան համար և միևնոյն ժամանակ՝ թէ ինչ են այն պատճառները, որոնք ժողովուրդներին բնաջինջ են անում։ Նրա փորձառութիւնը երաշխաւորութիւնն է իր քաղաքական հասունութեան։ Ինչպէս ուրեմն մի այդպիսի տարր կարող է անգիտանալ արդարութեան տարրական սկզբունքները և վրիժառութեան դիմել, երբ իր ազատութիւնը ստանայ... Հայը այն աստիճան զգուանք է զգացել բռնութիւնից, որ երբէք չպիտի հետևի նրանց օրինակին, որոնք երկար ժամանակ թունաւորեցին նրա կեանքը։ Հայը պիտի գոհ լինի հսկելով միայն, որ արդարութիւնը յարգուի, որպէսզի ապահովի իր երկրի այն փայլուն ապագան, որ արդէն նախագծւում է»։

(«Renaiss.»)

ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԸ ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄ ԵՆ ՋԱՐԴԱՐԱՐՆԵՐԻՆ

—

Ո՛չ միայն ձերբակալում են ջարդարարներին իրենց ստացած տեղեկութիւնների հիման վրայ, այլ, ինչպէս հաղորդում են Պոլսի թերթերը, դիմել են Պոլսի կառավարութեան և պահանջել, որ իրենց ձեռքը յանձնուեն բռնուած ջարդարարները ևս։ Այսպէս, Տիգրանակերտի երկու յայտնի մեպուսներ (պարլամենտի անդամներ) Ֆէյզի և Ջիալֆի, որոնց կառավարութիւնը բանտարկել էր, պահանջել են Անգլ. իշխանութիւնները, անմիջապէս ստացել և անգլիացի սպաների ընկերակցութեամբ ուղարկելով յատուկ մի բանտ առաջնորդուել։ Պարլամենտի այդ անդամները, ձերբակալուելուց քիչ առաջ էին վերադարձել Տիգրանակերտից, ուր նրանք գնացած էին եղել նոր խլրտում և ջարդ պատրաստելու նպատակով։

(«Ճակատ.»)

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԸ

—

Ամերիկական Կարմիր Խաչի պատուիրակութեան նախագահ Դոքտ. Բարթընը ահա թէ ինչ տեղեկութիւններ է հաղորդել «Ճակատամարտ» թերթի թղթակցին՝ իրենց գործունէութեան մասին.—

«Մենք այստեղ ենք եկել՝ մօտաւոր Արևելքի հայ, յոյն և արաբ եղբայրներին օգնելու։ Յանձնաժողովը բաղկացած է 40 անդամներից, որոնք պատկանում են Ամերիկայի բարձր դասակարգին։ Գործադիր մարմինը 7 անդամներից է կազմուած։ Մենք միասին բերել ենք 3 շոգենաւով լիքը ուտելիք, հագուստ և այլն, որոնց արժէքն է 5 միլիոն դոլար։ Շոգենաւերից մէկը գնացել է Բէյրութ և ունի իր վրայ 40 բժիշկներ՝ Կիլիկիայի համար։

Այն նպատակները, որ մինչև յանուար ամիսը հաւաքուած

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Թիֆլիս, 21 մարտի

ԱՐԺԻ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ.

—oo—

Կատարւում են խոշոր և կարևոր նշանակութիւն ունեցող անցքեր։ Ամբողջ աշխարհն ալեկոծ ծովի պէս մատնուած է տարերային կերպարանափոխութեան։ Հրի և մխի միջից, մոխիրների ու աւերակների տակից կրկին ու վերստին մարդկութեան կենդանի և անմար հոգին է հանդէս գալիս և նոր կեանքի նոր արշալոյսն է ծագում։ Եւ բոլոր ազգերի ու ժողովուրդների հետ միասին, նոյն վիճակին մատնուած, նոյն ցաւերով տապկած ու տանջուած, մենք էլ մեր գերմարդկային ճիգերն ենք թափում նորէն կեանք առնելու, նորէն մեր աւերակները շէնացնելու, նրանց մէջ կենդանի ու առողջ հոգի ներշնչելու նպատակով։

Եւ այս դժուարին ու ծանր գործը ամենայն ճշտութեամբ կատարելու և իրագործելու համար՝ ճանապարհներ ենք փնտրում, կատարւող անցուդարձի մէջ ուղիներ ենք որոնում, հեռու ենք փախչում մի անդունդից, մօտենում ենք մի փորձութեան, փրկուելով միւսից, և այսպէս անվերջ ու անդադար, և այսպէս միշտ շարունակ։

Օրերն ու շրջապատը մեզնից պատասխան են պահանջում, եկող անցնողները մեր սիրտն են նայում, մեր հոգու խորքերն են մտնում, մեր խօսքն են ուզում լսել, մեր կարծիքն են ուզում իմանալ։ Ահա, կայ «բոլշեւիզմ», կայ «համաշխարհային յեղափոխութիւն», կայ «վերածնուող Ռուսաստան», կայ «անկախ Հայաստան», կայ «Ղարաբաղ», կայ «Վրաստան», վերջապէս, կան անթիւ-անհամար հարցեր ու խնդիրներ, որոնք տակաւին դեռ պարզ չեն իրենց ամբողջ էութեամբ մեր հարեւանների և բարեկամների համար, մեր այն մօտիկների և մտերիմների համար, որոնք կամենում են լսել հայ ժողովրդին, իմանալ նրա արտայայտած մտքերը, ծանօթանալ նրա մամուլի հետ և այդ բոլորի մէջ գտնել մի ուղի, մի պարզ և որոշ գիծ՝ հայութեան ձգտումներն ու քաղաքական հայեացքները պարզելու համար։

Բայց հայ թերթերը մատչելի են միայն հայերի համար։ Մեր հարեւանները, մեր բարեկամները ծանօթանում են մեզ հետ միմիայն տեղական ռուս մամուլի միջոցով, որտեղ թարգմանաբար պիտի տրուեն հայ մամուլի արտայայտութիւններն ու կարծիքները այս կամ այն խնդրի ու եղելութեան վերաբերմամբ։

Գալով մասնաւորապէս Թիֆլիսի ռուսերէն մամուլին, մենք տեսնում ենք, նա, որպէս կուսակցական մամուլ, ոչ մի դէպքում չի կարող կատարել այդ գործը՝ ծանօթացնել օտարներին մեր մտքերի ու արտայայտութիւնների հետ։ Կայ մի թերթ միայն, որ հանդէս է եկել անկուսակցական դրօշակի տակ, բայց որի չորրորդ երեսը միանգամայն պարզում է թերթի ինչ լինելն ու նրա քաղաքական ուղղութիւնը։ Այդտեղ է թաղուած շան գլուխը։

Այդ թերթը՝ „Кавказское Слово“-ն է։

Այն կարեւոր և վերին աստիճանի նշանակալից գործը, որ նա կարող էր կատարել, եթէ նա իսկապէս լինէր անկուսակցական, ինչպէս յայտարարուած էր սկզբից և կրկնուած թերթի վերջին միօրեայ փակումից յետոյ՝ նա չի կարողանում և չի էլ ուզում կատարել, որովհետև նրա իրական բովանդակութիւնը չի համապատասխանում այն դրօշակին, որը նա պարզել է իր գլխավերեւ, իր հրատարակութեան առաջին իսկ օրից։

Թերթի չորրորդ երեսին կայ մի բաժին, որը կոչւում է՝ «О чемъ пишутъ»։ Այդ բաժնում թերթը ամեն օր տալիս է արտատպութիւններ տեղական հայ մամուլից այս կամ այն խնդիրների վերաբերմամբ։ Բայց հարկաւոր չէ մի առանձին ուշադրութեամբ քննել այդ բաժինը, որպէսզի նկատելի լինի նրա կուսակցական միակողմանիութիւնը։ Թերթի համար, կարծես, գոյութիւն ունի միայն և միմիայն դաշնակցական «Աշխատաւորը», որից նա ամեն օր տալիս է քաղուածքներ և մէկ-մէկ «Մշակ»-ը։ Կարծես թէ հայ ժողովուրդը հենց միայն այդ թերթերն ունի Թիֆլիսում և կարծես թէ հայութիւնն ամբողջ դաշնակցական է դարձել։

Եւ այն հանգամանքը, որ օտարները, շնորհիւ այդ «անկուսակցական» թերթի անհանդուրժելի միակողմանիութեան հնարաւորութիւն չունեն լիակատար կերպով ծանօթանալ հայ մամուլի հետ և ճանաչել այսպիսով հայ քաղաքական մտքի տարբեր ձգտումներն ու արտայայտութիւններն՝ շատ ծանր հետեւանքներ է առաջ բերում, և այդ բանը մենք համարում ենք միանգամայն անթոյլատրելի և թերթն էլ ծայր աստիճանի վնասակար հայութեան կենսական շահերի տեսակէտից։

Պէտք է դէն ձգել դիմակները.

Կամ թերթը կուսակցական է, դաշնակցական է, և այդ դէպքում նա ազատ է իր ընտրութիւններում. ինչ կը համապատասխանի իր ուղղութեանը, այն էլ կը տպի իր չորրորդ երեսում, կամ թերթը իսկապէս անկուսակցական է և այն ժամանակ նա պարտաւոր է քաղուածքներ տալ բոլոր հայ թերթերից և իրաւունք էլ չունի այլ կերպ վարուել և ընտրութիւններ կատարել, ղեկավարուելով նեղ կուսակցական սկզբունքով։

Մենք պահանջում ենք վերջ տալ այս անբնական դիմակահանդէսին։ Թող վերջապէս թերթը պարզ ասի առանց մոլորեցնելու հասարակութեանը. ինչ է նա, որն է նրա ճանապարհը և ինչն է պատճառը նրա պարզ ու [illegible] դաշնակցականութեան։

Եւ մի՞թէ նա չի զգում թէ ինչ արջի ծառայութիւն է անում սրանով ամբողջ հայ ժողովրդին և հայ ազգին։

ներքին գաւառները։ Շուտով մեր խմբից կը հասնեն 250 պարոններ և տիկիններ, որոնք պիտի գնան Սվազ, Էրզրում, Վան, Բաղէշ և Տիգրանակերտ՝ անգլիական զինուորների ընկերակցութեամբ։ Անշուշտ, մեր գործի յաջողութեան համար պէտք ունենք տեղացիների օժանդակութեան։ Մասնաւորապէս օգտակար պիտի լինեն մեզ հայ բժիշկները, օրիորդներն ու տիկինները։ Յոյս ունենք, որ հայ ժողովուրդը իր ամբողջ ուժովը պիտի օժանդակէ մեզ»։

ՊԵՏՐ ՍՏՐՈՒՎԷՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

—

«Вел. Рос.»-ն «Թայմզից» վերցնելով հաղորդում է.—

Ռուս յայտնի տնտեսագէտ պրոֆ. Պետր Ստրուվէն փախաւ Անգլիա։ Ամբողջ տարի նա թաքնւում էր բոլշեւիկներից, երեք անգամ ձերբակալուած էր, մի քանի ամիս թաքնւում էր Մոսկուայում և երեսը ածիլելով, շորերը փոխած փախաւ դէպի Արխանգելսկ Դաշնակիցների մօտ։ Նա նորից բռնուեց և մի շարք արկածներից և ոտքով ճանապարհորդելուց յետոյ, անցաւ ֆինլանդական սահմանը և յաջողութեամբ Անգլիա հասաւ։ Պետր Ստրուվէն «Թայմզի» աշխատակցին ասաց.—Ինչպէս ռուս սահմանադրականի, ինձ անհասկանալի է, թէ ինչպէս է որ Դաշնակիցները բանակցում են բոլշեւիկների հետ։ Նրանք, որոնք երեւակայում են, թէ հնարաւոր է համաձայնութեան գալ քաղաքակիրթ աշխարհի և բոլշեւիկների հետ, հասկացողութիւն չունեն թէ ինչ է կատարւում Ռուսաստանում։ Բոլորովին սխալ է թէ բոլշեւիկական կառավարութիւնն ընդհանրացած է. եթէ Տրոցկին փորձ անէր մի վերստ ոտքով անցնել Մոսկուայում, նա անպայման կը սպանուէր։ Ոչ մի թագաւոր իր հպատակներից այնքան չէր վախենում, որքան բոլշեւիկական կառավարութեան ղեկավարները։ Չի կարող լինել չափաւոր բոլշեւիզմ և եթէ բոլշեւիզմը սկսի ազատութեան զիջողութիւններ անել, նա կը կործանուի, որովհետև նա որպէս մարմնացած բռնութիւն, պահպանւում է միայն սւիններով։ Սխալ է, որ կարծում են, թէ բոլշեւիկների զինուած ույժերը կարող են լուրջ դիմադրութիւն ցոյց տալ լաւ կազմակերպուած զինուած զօրքերին։ Այդ հայեացքը ոչ միայն սխալ է, այլև վտանգաւոր, որովհետև դա այն տպաւորութիւնն է թողնում, ինչ որ իրենց ցանկալի է համաշխարհային յեղափոխութեան նպատակներին հետեւելու ժամանակ։ Բոլշեւիկների ամբողջ ույժը կայանում է քաղաքակրթութեան առաջնորդների անվճռականութեան մէջ։

ԿՐԻԼԵՆԿՈՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

—

ՕԴԵՍՍԱ, 21 փետր.—Նախկին գլխաւոր հրամանատար Կրիլենկոն յայտարարութիւն տուեց ժողովրդական կոմիսարների խորհրդին այն մասին, թէ պէտք չէ խորհրդային հանրապետութիւնը ծանրաբեռնել հակա-յեղափոխական գերիներով։ Ըստ Կրիլենկոյի կարծիքի, նախապաշարմունք է գերիներ վերցնելը, քանի որ նրանք նորից կարող են ծանր վնաս հասցնել յեղափոխութեանը։

ՄՐՑՈՒՄ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

—

ՕԴԵՍՍԱ, 21 փետր.—Նիւ-Եօրքում կազմուած է պարսկա ամերիկական ընկերութիւն։ Նրա նպատակն է ձեռք ձգել պարսկական շուկան և մասնակցել Պարսկաստանի երկաթուղիների մէջ։ Անգլիական վաճառականութիւնը, որ ներկայումս Պարսկաստանում միակ տիրապետողն է, շատ անհանգիստ է այդ վտանգաւոր մրցումից։

ՍԱԶՈՆՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԸ

—

Համաձայն Ս. Դ. Սազոնովի առաջարկութեան, առեւտրա-արդիւնաբ. և ֆինանս. միացեալ կազմակերպութիւնը, յանձին առեւտրա-արդիւնաբ. ֆինանսական խմբերի 17 խորհրդակցական պատգամաւորների, կը մնան Ս. Դ. Սազոնովի մօտ Պարիզի կոնֆերենցիայի տեւողութեան ամբողջ ժամանակ՝ վերածնուող Ռուսաստանի տնտեսական և ֆինանսական շահերը պաշտպանելու համար։ Պատգամաւորների կազմի մէջ մտել են՝ պր. Ա. Ա. Բոբրինսկի, Դ. Վ. Բիլոզերսկի, Գ. Է. Վէյնշտէյն, Ա. Ֆ. Դիրիւժինսկի, Ն. Ֆ. Դիդմար, Ի. Գ. Կոգան, Ն. Դ. Մորոզով, Ն. Ե. Պարամանով, Ե. Դ. Պրեսդկին, Ի. Ն. Ռեւաշինսկի, Դ. Վ. Սիրոտկին, Պ. Ա. Տեկստոն, Ս. Ն. Տրեդեակով, Վ. Ա. Շուցով, Ե. Մ. Էպշտէյն։

ՏԻՖԸ ԳԱՒԱՌՈՒՄ

--

Ջիւանշիրի գաւառում տիֆը համարեա ընկել է, Ագդաշում թուլանում է։ Ջիբրայիլի և Զանգեզուրի գաւառներում ազգաբնակութեան մէջ տիֆը համարեա թուլանում է, բայց սաստիկ պահպանւում է գաղթականների մէջ սննդի, շորերի, սապոնի և այլն պակասութեան պատճառով։

ՀԱՅՈՑ ԳՈՅՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

—

Կ. ՊՈԼԻՍ. Կառավարութիւնը կարգադրութիւն արաւ վերականգնել հայերի այն գոյքերը, որոնք անձամբ վերադարձել են։ Նրանց ժառանգները չեն կարող նրանց փոխարինել։ «Ճակատամարտը» հաղորդելով այդ կարգադրութեան մասին, ենթադրում է, որ դա կունենայ լուրջ հետեւանքներ։ Չվերականգնած գոյքերը կը մնան տաճիկների ձեռքին կամ կանցնեն որպէս սեփականութիւն կառավարութեան։

ՅԱՆՑԱՒՈՐՆԵՐԻ ՆԵՐՈՒՄԸ ԱՐԱԲԻԱՅՈՒՄ, ԲԱՑԱՌՈՒԹԵԱՄԲ ՀԱՅԵՐԻ ԵՒ ԱՐԱԲՆԵՐԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆՑ

—

Կ. ՊՈԼԻՍ. Արաբական կառավարութիւնը որոշեց ներումն յայտարարել բոլոր յանցանքների համար, բացառութեամբ հայերի և արաբների սպանութիւնների։

ԷԼԲՐՈՒՍ ԼԵՌԱՆ ՎԻԺՈՒՄԸ

—

Բոց Էլբրուսի գագաթին։

Բատալպաշինսկից եկող ականատեսը պատմում է, որ Էլբրուսի գագաթին ծուխ է երեւում, որպիսին երբեմն դուրս է գալիս հրաբուխի բերանից, ինչպէս այդ սովորաբար լինում է նախ քան վիժումը։ Գիշերները գագաթի վրայ բոց է երեւում։

Էլբրուսի ստորոտներում գտնուող գաղթականները վախենալով Էլբրուս լեռան վիժումից, Պեաթիգորսկից և Կիսլովոդսկուց անցել են Եկատերինոդար։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱՏԱՐԱԾ ԴԻՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔԻՆ

(Յօդուած տիկ. Զապէլ Եսայեանի)

—

Այս յօդուածը, որ մի «բաց նամակ է Եգիպտոսի հայ մամուլին», տաղանդաւոր բանաստեղծուհին զետեղել է «Յուսաբեր» թերթի մէջ, ըստ երեւոյթին՝ նպատակ ունենալով փարատելու այն վատ տպաւորութիւնը, որ թողել են զանազան «ամբաստանող» ու «վարկաբեկիչ» կոչեր։

Թէ ինչ կոչեր են դրանք և ում են «դասալիք» ու «դաւաճան» կոչում և ինչու Թորգոմի անունը խառնուած է կոչերի խնդրի հետ և նրա արարքը տիկնոջ կողմից կոչուել է «առնուազն անկարգապահութիւն շատ մը տեսակէտով»—պարզ չէ։

Յամենայն դէպս տիկնոջ նամակը իր հակիրճ գնահատութիւններով արժանի է ուշադրութեան։

1917-ի աշունին, երբ հայ ժողովուրդը անսպասելի կերպով մտաւ իր եղերերգութեան երկրորդ շրջանի մէջ—ասում է տիկինը—բաղդը և պատիւը ունեցայ ապրելու մեր Կովկասահայ եղբայրներուն հետ և սերտ կերպով բաժնելու իրենց յոյսերը, ոգևորութիւնը, վտանգները և ցաւերը։ Կովկաս ապաստանած Թիւրքահայերու ներկայացուցիչը ըլլալով Բագուի Ազգ. Խորհրդին մէջ, առիթը ունեցայ մօտէն հետեւելու և մասնակցելու այն բոլոր փուլերուն, որ թրքական արշաւանքը յաջորդաբար ներկայացուց մեզ. և հետեւաբար իբր լաւատեղեակ անձէ, որ իմ խօսքերս կուղղեմ Եգիպտոսի հայերուն»։

Այնուհետև տիկինը յայտարարում է, որ իր հաղորդածները չըպիտի համարուին այս կամ այն կուսակցութեան կամ հատուածի ի նպաստ պաշտպանողական, այլ զուտ ճշմարտութիւնն է, յստակ իրողութիւնը՝ որ պատմելու է։

... «Կովկասահայերը—ասում է նա—և իրենց կողքին հոն ապաստանած Թրքահայերը զինուորական տեսակէտով ըրին աւելին, քան կարող էին ընել՝ տուեալ պայմաններու մէջ։ Ռուսահայ, թէ Թրքահայ, իրենց արիւնը խառնեցին հասարակաց թշնամիին դէմ. և այս սոսկալի ու գեղեցիկ երեւոյթին առաջ՝ ինձի կը թուէր որ ամեն վէճ ու հաշիւ պէտք էր վերջնականապէս անհետացած ըլլար»։

Եւ յիրաւի, կազմուած բոլոր զօրամասերը արին, ինչ որ կարող էին անել։ Եթէ նրանցից ոմանք բաղդ չունեցան որ իրենց պայքարը պսակուէր յաջողութեամբ—արդար չի լինիլ, եթէ շտապենք նրանց մեղադրելու, այլ, եղբայրական հոգատարութեամբ պիտի մօտենանք այդ անյաջողութեան պատճառներին, բարեխղճութեամբ ու ցաւով և ոչ թէ թշնամութեամբ և նախատինքներով։

Այնուհետև տիկինը համառօտաբար սկսում է թուել թէ ինչ արին՝ գեներալներ Նազարբէգով և Անդրանիկ, յետոյ՝ Դրօն, Բագուի հայ բանակը, Ուրմիայի և Սալմաստի հայ զօրաբանակը, Անդրկասպեան երկիրների հայ գաղութները և այլն։

«Զօրավար Նազարբէկով եւ Դրօ, որոնք կարողացան իրենց զինուորներով, հակառակ Թիֆլիսի վրացի և թաթար քաղաքական խառնակ և պղտոր դրութեան, դանդաղեցնել թշնամիին յառաջխաղացումը և անոր անհաշուելի տրամադրութիւնը մեղմացնելով՝ հարկադրել որ հրաժարի իր սկզբնական ծրագրէն, այն է՝ Կովկասի հայերուն սպառ բնաջնջումը։

Զօրավար Անդրանիկ, որ իր 4000-է աւելի քաջերով անմիջապէս սթափուած առաջին պարտութիւններէն և թերևս անդառնալի սխալներէն (սխալներ՝ կատարուած հաւասարապէս ամենուն կողմէն) կարողացաւ ազգային մշտնջենական պատիւը փրկել և հակառակ թշնամիին սպառնալիքներուն, առանց օգնութեան ոեւէ յոյսի, իր զինուորական բարձր պատուոյն միայն անսալով, շարունակեց կռիւը մինչեւ վերջ։

Բագուի հայ ժողովուրդը [illegible] թիւրքերի հետ հաշտութիւն, [illegible] Երևանի շրջանին համար այն հաստատ համոզումով, որ օգնական ույժերի յայտնուիլը պիտի մղէր Արարատեան հանրապետութեանը՝ խզել անարգ թշնամու հետ կապած դաշինքը։ Այդ բանակին յաջողուեց թշնամու մեծ ույժը դէպի իրեն քաշել և անհնարին դարձնել որ թուրքերը հասնեն իրենց նպատակին—այն է՝ ազատ ձեռքերով բնաջինջ անել Կովկասի հայութիւնը։

Ուրմիոյ եւ Սալմաստի հայ զօրամասը, որ միացած էր անհետացած ռուսական հսկայ բանակին և որին միացել էին Վանից նահանջող ույժերը, ամիսներ շարունակ թումբ կանգնեցին Ատրպատականի խուժող թուրքերին և դժուարացնելով նրանց մուտքը այդ կողմից Կովկաս, միաժամանակ անգլիական զինուորական գիծը զերծ պահեցին վաղաժամ յարձակումներից...

«Բոլորը, բոլորը—շարունակում է տիկինը—առանց խտրութեան, հաւասար եղբայրներն են այն քաջերին, որոնք փառքով վերջացուցին ամբողջ հայ ժողովրդին յուսահատական և հերոսական ոգորումը՝ այս մեծ պատերազմի ընթացքին»։

Օտարները կարող են, իրենց իրաւունքն է, մեր այս զանազան տեղերում ունեցած գործունէութիւնը, առանձին առնելով և առանց մանուանդ մեր հոգսերի և ցաւերի շատ խոր թափանցելու—քննադատական խօսքեր անել, բայց մեզ համար պարզ է այսօր, որ թէև պարագաների բերումով, կամ թշնամու դաւերով իրարուց բաժանուած ենք գործել ամենքս, սակայն գործել ենք միևնոյն նպատակով և կռուել մեր դարաւոր թշնամու դէմ ու հնար եղած միջոցները չենք խնայել՝ փրկելու համար մեր ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը։

Անշուշտ, սխալներ, վարանումներ, յապաղումներ տեղի ունեցել են. այդ բոլորը ազդել են մեր գործունէութեան վրայ, սակայն այդ բոլորը վերագրել մէկ կամ միւս կողմին առանձնապէս, այլ և մի շարք անյաջողութիւնների պատասխանատուութիւնը բեռցնել որոշ մարդկանց, որոշ կուսակցութիւնների կամ հատուածի վրայ—դա կը լինէր ոչ իրաւացի։

«Մենք ամենքս, առանց բացառութեան, մասնակից ենք մեր յաղթանակներուն և մեր պարտութիւններուն. և այդ պատճառով է, որ իմաստութիւնը կը պահանջէ վերապահութեամբ նայիլ այնպիսի դէպքերու վրայ, որոնց դերակատարներուն հետ տակաւին ուղղակի յարաբերութեան մէջ չենք և իրենց բուն դրդապատճառները չունինք աչքի առաջ»։

Մեղադրում են, օրինակ, որ Թուրքերի հետ բանակցութեան մտան և հաշտութեան խօսքեր են արել։ Բայց մի՞թէ կարելի է չմտածել, թէ ինչպիսի դրութիւն էր ստեղծուել այդ օրերին և թէ ինչպէս «հաշտութեան բանակցութիւնները տաժանելի անհրաժեշտութիւն մըն էր»։ Յիրաւի, այն մարդիկ, որ հարկադրուել էին բանակցութեան մէջ մտնել իրենց եղբայրների դահիճների հետ, մի՞թէ գթութեան զգացմունքից բացի ուրիշ զգացմունք կարող են ներշնչել մարդու։

«Ես կը համարիմ, որ Ահարոնեան, Քաջազնունի, Խատիսեան, Պապաջանեան և ուրիշները աւելի բան մը զոհեցին՝ քան իրենց կեանքը»։

Մասնաւոր մարդկերի գալով, մեր թափած ջանքերը և զոհողութիւնները պահանջում են, որ զգոյշ լինենք այն ամեն խօսքերից, որ ույժերը կարող են ջլատել... Ազգային միութիւնը պիտի պահպանել ամեն գնով. նոյն իսկ զոհելով մեր դժգոհելու և խծբծելու անդիմադրելի տենչանքը...

Գալով դասալիքներին, դաւաճաններին և այլն, մեծ ամբաստանութիւններ են դրանք, որ թշնամին է պատրաստում արտասահմանում՝ ստուեր ձգելու համար մեր հերոսական և գրեթէ անհնարին ոգորումի վրայ։

Թշնամին վճռեց գերեզման դարձնել մեր հայրենիքը, մենք յաջո-

է—18 միլիոն դոլլար է։ Մեր յանձնախմբի ծախսերը անձնապէս վճարում են երկու մարդիկ—Մր. Դոյջ, Մր. Արթընը Ջէյմս։ Ամերիկայի հայերն ևս մեծ գումարներով մասնակցել են գումարին։

Ես գնալու եմ Հայաստանի

ղեցրինք օրօրոցի վերածել նրան.

...«Նորածին մանուկը, Նոր Հայաստանը կարօտ է մեր ամենուս գուրգուրանքին և խնամքին. արդեօք անկարելի՞ է, որ մաքուր ձեռքերով և մաքուր շրթներով բոլորւինք անոր շուրջը»...

Իրաւի, Թող տաղանդաւոր հայ բանաստեղծուհու այս սրտագին կոչը արձագանգ տայ բոլոր սրտերում—

Նորածին Հայաստանը կարօտ է մեր ամենքի գուրգուրանքին և խնամքին. բոլորւինք նրա շուրջը՝ այլ ևս մաքուր ձեռքերով և մաքուր շրթունքներով: Բաւական է. դոհենք մեր դժգոհելու և խծբծելու անզիմադրելի ախորժակը...

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՎՐԱՑ ՀԵՌԱԳՐԱԿ. ԳՈՐԾ.)

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Պարենաւորում Գերմանիային

Պարիզի Թղթակիցը լսել է, որ Բրիւզէլի ժողովում, Դաշնակից պետութիւնները, զինադադարի հարցի առթիւ, ի սէր մարդկութեան, նորից կրկնեցին իրենց ցանկութիւնների վրայ Գերմանիային ուտեստի մթերքներ հասցնել հետևեալ քանակութեամբ՝ 300,000 տոն հացահատիկներ և 70,000 խոզային նիւթեր ամսական մինչև առաջիկայ սեպտեմբեր:

Անգլիական պարլամենտի վերահսկիչ Ռոբերտսը յայտնում է, թէ նախ և առաջ պարլամենտի կողմից կը բաւարարուեն Դաշնակիցների և արևելեան ու հարաւային Եւրոպայի նոր կազմուող պետութիւնների կարիքները և ապա թշնամինը:

Դաշնակից պետութիւնների պրեմիէրները Պարիզում

Դաշնակից պետութիւնների պրեմիէր նախարարները Պարիզ կը հասնեն մինչև ժողովը, ուր կը ներկայացնեն ֆելդմարշալի, սէր Դուգլաս Հեյգի և անգլիական ուրիշ զինուորական քննիչների զեկուցումները: Այդ զեկուցումը վերաբերում է Գերմանիայի զինաթափութեանը, նոր զինուորներ ժողովելուն և գերմանական բանակի թւին: Կարծում են, որ զեկուցումը կընդունուի առանց հակաճառութեան: Այդ կը լինի զինադադարի վերջին զեկուցումը: Սրա մէջ կը մտնեն նաև խաղաղութեան նախնական պայմանները: Հետևեալ քայլը լինելու է Գերմանիային առաջարկներ անելը:

Վիլսոնի ժամանումը Պարիզ

Այսօր Պարիզ ժամանեց նախագահ Վիլսոնը:

Արդիւնաբերական ձեռնարկութիւնները յանձնւում են օտարներին

Պետրոգրադից հեռագրով հաղորդում են, որ ժողովրդական կոմիսարները դեկրետ են հրատարակել, որով յայտարարում են, թէ ի նկատի ունենալով Խորհրդային հանրապետութեան անընդունակութիւնը՝ շարունակելու մի քանի արդիւնաբերական ձեռնարկութիւններ, կոնցեսիան կը տրուի օտարներին, մանաւանդ ի նկատի առած հիւս. երկաթուղիների հիմնական գծերի շինութեան և ընդարձակ անտառների շրջանների շահագործութիւնը:

Բոլշեւիկների անաջողութիւնները Էստլանդիայում

Բոլշևիկ մամուլը անհանգստութեամբ նկատում է Էստլանդիայի կարմիր բանակի յաճախակի անյաջողութիւնը և գտնում, որ դա հետևանք է բանակի յոգնածութեան, վատ զինուած լինելուն և պարենաւորման կազմակերպութեան թուլութեան:

Զինադադարի ծովային պայմանները

«Թայմզ»ի աշխատակիցը հաղորդում է, որ զինադադարի ծովային պայմանները համաձայն են Գերմանիայի, Աւստրիայի, Տաճկաստանի և Բուլղարիայի համար: Նրանք նախագծում են լիակատար զինաթափութիւն: Գերմանացիք պարտաւոր են յանձնել 17 զինուորական նաւեր և 92 յածանաւեր: Գերմանական 31, աւստրիական 40 վաճառականական և օժանդակ զրահանաւեր կը համարուեն որպէս վաճառականական նաւեր: Գերմանական կարելի ձեր, որոնք իրենց մէջ ունեն 14 կարել, կը վերադարձնուեն նախկին տէրերին: Անթել հեռագրի կայանները Նաուէնի, Հանովերի, Բերլինի, Վիէննայի, Բուդապեշտի և Պոլսի կը ծառայեն միմիայն առևտրական նպատակի համար: Աւստրիական նաւատորմիղը, որը բաղկացած է 13 զինուորական նաւերից, կը յանձնուեն Դաշնակիցներին: Տաճկական և բուլղարական նաւերի հետ նոյն կերպ կը վարուեն:

Հելիգոլանդի նաւահանգիստը և ամրութիւնը կը քանդուեն գերմանացիների հաշուին Կիլի վիճակը կորոշի խաղաղարար կոնֆերենցիան: Բոլոր ամրութիւնները, որոնք պաշտպանում են Բալթիկ ծովի մուտքը, կը քանդուեն, իսկ Կիլի նեղուցը կը բացուի բոլոր ազգութեան զինուորական և առևտրական նաւերի համար:

Ժողովուրդների դաշնակցութեան մասին

Վաշինգտոնից հաղորդում են, որ Միացեալ Նահանգների մամուլի մի մասը պաշտպանում է Վիլսոնի ծրագիրը ժողովուրդների դաշնակցութեան մասին, միւսները հաւանութիւն են տալիս նրա գլխաւոր հիմունքներին, սակայն պահանջում են ուղղումներ: «Նիւ-Եօրք Վորլդ» յայտնում է, թէ ղեկավարող լրագիրների խմբագիրները մատնանշում են այն հանգամանքի վրայ, որ ամբողջ երկիրը համակրանքով է վերաբերւում դէպի ազգերի դաշնակցութիւնը: Արևելքում դաշնակցութեան կողմնակից են 63 լրագիր, 43-ը հակառակ, 15ը չէզոք: Հարաւում 317ը կողմնակից են դաշնակցութեան և միայն 12-ը որոշ կերպով հակառակ:

Ժողովրդ. դաշնակց. աշխատանքների վերանորոգութիւնը

«Թայմ» հաղորդում է, որ ժողովուրդների դաշնակցութեան յանձնաժողովը շուտով կը վերանորոգէ իր աշխատանքները:

Լլոյդ-Ջօրջը չի վերադառնում Լոնդոն

Ամենայն հաւանականութեամբ Լլոյդ-Ջորջը կը հրաժարուի ժամանակաւորապէս Լոնդոն գալ: Միայն չնախատեսնուած հանգամանքները, որպիսին նրա ներկայութիւնը անհրաժեշտ կը համարուի Լոնդոնում, նրան կը ստիպեն դուրս գալ այնտեղից:

Գերագոյն խորհրդի օրակարգը

Երեքշաբթի նիստ չկար: Լլոյդ-Ջօրջը, Կլեմանսոն և Վիլսոնը հանդիպեցան ժամի 3-ին «Կարլտոն-օտել»-ում: Չորեքշաբթի օրուայ գերագոյն խորհրդի նիստի օրակարգը հետևեալն է. 1) Լեհացիների և Ուկրայնցիների թշնամական գործողութիւնները և 2) Լեհաստանի արևմտեան սահմանները:

Լլոյդ-Ջօրջի դէպի Անգլիա մեկնելու մասին

Լլոյդ-Ջօրջը յայտնեց այս շաբաթ իր դէպի Լոնդոն մեկնելու մասին: Ի նկատի ունենալով, որ նրա ներկայութիւնը Պարիզում ներկայումս անհրաժեշտ է, Վիլսոնը, Կլեմանսոն և Օրլանդօն դիմեցին նրան հետևեալ նամակով.—«Նպատակ ունենալով շուտով խաղաղութեան հասնել, մենք գտնում ենք, որ ձեր ներկայութիւնը Պարիզում անպայման անհրաժեշտ է, և մինչև որ չեն մշակուի այդ խաղաղութեանը վերաբերեալ գլխաւոր հարցերը, մենք խնդրում ենք լսել մեր ցանկութիւնը: Կարծում ենք, որ կարևոր հետևանքների կարելի էր հասնել, եթէ դուք միջոցներ ձեռք առնէիք գոնէ երկու շաբաթով երկարացնելու ձեր այստեղ մնալը: Մենք արտայայտում ենք մեր խնդիրը լի համոզմունքով, որ ձեր Անգլիա վերադարձը կապուած է անյետաձգելի գործերի հետ և այդ պատճառով խնդրում ենք անել այդ զոհաբերութիւնը: Ձեզ նուիրուած Վիլսոն, Կլեմանսօ, Օրլանդօ: Լլոյդ Ջորջը այդ նամակը ուղարկեց իր կաբինետի կոլլեգներին:

Պաշտօնական շրջաններում այն կարծիքն է տիրում, որ բրիտանական զինուորական կոմիտէն բարեմիտ կերպով կը վերաբերուի Դաշնակիցների խնդրին և Լլոյդ Ջօրջը կը մնայ Պարիզում կրկին մօտ 15 օր, որպէսզի քննութեան առնի այն խնդիրները, որոնք կոնֆերենցիայի հերթին են սպասում: Լլոյդ Ջօրջը դուրս կերթայ դէպի Անգլիա, միայն ամենամեծ անհրաժեշտութեան դէպքում:

ՔՐՈՆԻԿՈՆ

Դէպի Թաւրիզ.— Մարտի 19-ին Թիֆլիսից Թաւրիզ մեկնեց մի գնացք, որը տարաւ մօտ 80 հայ և ասորի գաղթականներ, որոնց համար անգլիական միսիան տրամադրել էր հինգ վագոն և դրել իր պահակախումբը՝ գաղթականներին անվտանգ տեղ հասցնելու համար: Նոյն գնացքով մեկնեց նաև Թաւրիզի երկաթուղու պետը և մի քանի ծառայողներ:

◆ **Գեն. Բարաթով.**—Թիֆլիս եկաւ գեն. Բարաթովը, որը պատերազմի ժամանակ վարում էր Պարսկաստանի կորպուսի հրամանատարի պաշտօնը:

◆ **Ախալցխայի եւ Ախալքալաքի գաւառներում.**—Ախալցխայի և Ախալքալաքի գաւառներում վերացւում է ընդհանուր հրամանատարութիւնը. գեն. Կվինիտաձէն վարելու է միմիայն ռազմական գործողութիւնները, իսկ քաղաքացիական վարչութիւնները այդ գաւառներում վարելու է Թիֆլիսի նախկին ընդհանուր նահանգապետ Շ. Մաղլակելիձէն, որ այս օրերս նահանգական բատալիոնի հետ մեկնելու է Ախալցխա:

◆ **Այցելութիւն եւ փոխ-այցելութիւն.**—Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչ Լ. Եւանգուլեանը այցելեց Ռուսաց Ազգային Խորհրդին, որի նախագահ Ա. Վ. Գուրենովը փոխ-այցելութիւն արեց:

◆ **Բծաւոր տիֆով հիւանդացածներ.**—Ծառայութեան միջոցին բծաւոր տիֆի հիւանդանոցի օրդինատոր բժ. Կիկոձէն, էին բժիշկ Շէնգեր, Թաղային բժիշկներ՝ Շահվերդեան, Տէրիև, Երեմինա և ֆելդշերներ՝ Ռոմանենկօ և Կեժիկաձէն:

◆ **Թիֆլիսի շուկայում.**—Վերջին երկու օրուայ ընթացքում Թիֆլիսի շուկայում երևացել է և ծախւում է փունտը 8—10 ռ., որոշ տեղերում, տաւարի միսը. կարելի է գնել 5 ռ. 50 կ., հացից բացի սկսել է թանգանալ նաև ուրիշ կենսամթերքներ, իսկ որոշ մթերքներ շուկայից անյայտացել են:

◆ **Յովհ. Թումանեանի ծննդեան 50-ամեակի առիթով.**—Երեքշաբթի, մարտի 17-ին Լիսիցեանի առաջին հայկական գիմնազիայի մանկավարժ. խումբը և աշակերտութիւնը կազմակերպել էին հրաժշտական երեկոյթ Յովհ. Թումանեանի պատւին: Երգեցիկ խումբը յոբելեարին դիմաւորեց գեղեցիկ ձօնով, որ գրել էր ուսուցիչ Անտ. Մայիլեանը: Ծրագրի մէջ, որ կազմուած էր բացառապէս Յով. Թումանեանի գրուածքներից, աչքի էին ընկնում Լոռուայ կեանքից վերցրած արձակ պատմուածքներ, որ առաջին անգամ էին բեմից արտասանւում: Բանաստեղծը պատասխանելով աշակերտների և Մանկավարժ. Խորհրդի ողջոյններին, իր ուրախութիւնը յայտնեց, որ առիթ է ունենում ներկայ գտնուելու հայ բանաստեղծի առաջին մեծարանքին «գիմնազիոն կոչուող» հիմնարկութեան մէջ և հրաւիրում էր երիտասարդութեան միշտ աշակերտ մնալ և երբէք չդադարել կեանքի մէջ սովորելուց: Երեկոն անցաւ ընդհանուր ոգևորութեամբ և վերին աստիճանի կենդանի:

◆ **Գաղթականների համար.**—Բագուի գաղթականների օգնութեան գործը կազմակերպելու համար Բագու մեկնեց ամերիկեան կոմիտէի անդամ դոկտ. Եւնէր. Նոյն նպատակով Երևան մեկնեց նոյն կոմիտէի անդամ դոկտ. Մայն:

◆ **Աբխազիայի ինքնավարութիւն.**—Վրաց կառավարութիւնը որոշել է Աբխազիայի Ազգային Խորհրդի բացումը յայտարարել, որ Աբխազիային տրւում է ներքին ինքնավարութիւն: Խորհուրդը լիակատար իրաւունք ունի անկախ վարելու բոլոր վարչական գործերը և զեմստւօն:

◆ **Պետական թղթադրամներ.**—Պետական թղթադրամներ պատրաստելու համար վրաց կառավարութիւնը յատկացրել է 100,000 ռ. և յանձնարարել է արտաքին գործերի մինիստրին, որ միջոցներ ձեռք առնի արտասահմանից թղթադրամների պատրաստելու համար հարկաւոր նիւթեր բերելու:

◆ **5 միլիոն ռուբլի վարկ.**—Վրաց կառավարութիւնը սկզբունքով որոշել է մարգանից արդիւնաբերող ակցիոներական ընկ. վարկ բաց անել հինգ միլիոն ռուբլի:

◆ **Արտօնութիւններ զինուորականներին.**—Կառավարութիւնը որոշել է ներկայումս ռազմաճակատում գտնուող զինուորական աստիճանաւորներին և սպաներին տալ այն արտօնութիւնները, որ նրանք ունէին հայ-վրացական պատերազմի ժամանակ:

◆ **Միլիցիայի ծախսերի համար.**—Ներքին գործերի մինիստրի տրամադրութեան տակ է դրուել մէկ ու կէս միլիոն ռ. Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան յանձնելու համար, որը հոգալու է միլիցիայի ծախսերը:

◆ **Պարենաւորման խորհուրդ.**—Կառավարութիւնը իր վերջին նիստում որոշել է ամէն տեսակ աջակցութիւն ցոյց տալ նոր կազմուած պարենաւորման Խորհրդին, որպէսզի նա կարողանայ կարճ ժամանակում սկսել իր գործունէութիւնը:

◆ **Թիֆլիսի բորսան.**—Մարտի 20-ին բորսայում դարձեալ փնտրւում է ռուսական և արտասահմանի վալիւտան: Գները առաջարկի բացակայութեան պատճառով, շարունակում են բարձրանալ: 100 ռուբլիանոց ռուսական դրամաթղթերին վճարում են 92 տոկոս յաւելում, 500 ռուբլիանոցներին՝ 75 տոկոս, մանրերին՝ 40 տոկոս, «Կերենսկու» փողերի գները ամուր են՝ խոշորները 22 տոկոս յաւելում, մանրերը 14—15 տոկոս: Անգլիական փունտ ստերլինգների գները նորից բարձրացել են. բանկնոտները շրջանառութիւն ունեն 105—106 ռ., չէկերը 92 93 ռ.:

Ֆրանսիայի ֆրանկները թանգացել են մինչև 4 ռ. 20 կ. (բանկնոտները), Ռումինիայի լեաները 1 ռ. 40 կ.: Շատ ամուր են թիւրքական լիրաները՝ 143 ռ.: Չէկերի փոխանակութեան համար վճարում են 17 և քառորդ տոկոս: Ֆոնդերի գնութիւնը լաւանում է: 4 տոկոսաբեր ռենտան ծախւում է 86 ռուբլիով, ազատութեան փոխառութիւնը 73 ռ., 5 տոկ. փոխառութիւն 1915 թ. 82 և կէս, 5 և կէս տոկոս. պատերազմական փոխառութիւնը 85 և կէս: Ակցիաներից թոյլ են Վաճառականական բանկի նոր ակցիաները 375 ռ., Կովկ. պահեստավարքական ըն. ակցիաները՝ 110-115 ռ. և իմպորտ և էքսպորտինը. 100 ռ.:

◆ **Ուղղում.**—Երէկուայ համարի «Մամուլ»-ի բաժնում «Նարոդնոե Զնամիայի» խօսքերը հպատակութեան օրէնքի մասին սխալմամբ վերագրուած են «Բորբային», մի բան, որ, ի միջի այլոց, ինքն ըստ ինքեան պարզ է «Բորբայի» արտատպուած տողերից:

ԱՅՍՕՐ

Գրական-Գեղագիտական Սալոնի այսօրուայ (ուրբաթ) Jour fixe-ին վերջնական քննութիւն ու որոշում է տ. Աարպետի պահանջով, նրա դէմ յարուցուած, տաճիկների Ալէքսանդրապոլում եղած օրերին, զրպարտութիւնների շուրջը: Սկիզբը ճիշդ 7 ժ. երեկ. Նիստը հրապարակային:

◆ Երեկոյեան ժամը 7-ին նշանակուած է Հայոց Ազգագրական ընկերութեան արտակարգ ընդհանուր ժողով նոյն ընկերութեան դահլիճում:

ԱՆԴՐԻԱԳՈՐԾ ՏԷՐ-ՄԱՐՈՒՔԵԱՆ

Աբովեանի արձանի ստեղծագործող նշանաւոր անդրիագործ Տէր-Մարուքեանը, ինչպէս գուժում է ինձ անցեալ փետրուարի 12-ից Պարիզից երէկ ստացած նամակը, վախճանուել է Պարիզում: Ուրեմն նրա բոլոր տենչանքն ու զոհաբերութիւնները օր առաջ կանգնեցնելու Երևանում Աբովեանի արձանը չպսակուեցին: Եւ սրա միակ յանցաւորը հայկական ներհակութիւնն ու անտարբերութիւնը: Հանգուցեալ Կոստանդին Խատիսեանը, որ Աբովեանին Երևանում արձան կանգնեցնելու նախաձեռնողներից մէկն էր, եթէ կենդանի լինէր, արդէն այդ կազմ ու պատրաստ արձանը վաղուց կանգնեցուած կը լինէր Երևանում: Սրա մահից յետոյ ինքը՝ անդրիագործ Տէր-Մարուքեանը Պարիզից եկաւ այստեղ, Գրական-Գեղագիտական Սալոնում հրապարակական զրոյց եղաւ: Տէր Մարուքեանը տուաւ բացատրութիւններ, զեկուցեց արձանը ձուլելու ծախսերի համար: Ապա գնաց Երևան, ընտրեցին պատշաճ տեղ արձանը կանգնեցնելու համար, ցանկապատուեց այդ տեղը և յետոյ անդրիագործը վերադարձաւ Պարիզ: Սկսուեց սակարկութիւն Բագուայ Կուլտուր. Միութեան հետ արձանի մնացորդ ծախսերի համար: Մինչ այս մինչ այն, սկսուեց պատերազմը և ամէն բանակցութիւն կանգ առաւ, իսկ Տէր-Մարուքեանն էլ [illegible] դացաւ [illegible] տարի առաջ [illegible] հասնելու [illegible] գործին, նոյնիսկ իրան հասանելիք գումարի հաշւից: Սակայն ոչ մի օգնութիւն: Պարիզում Պօղոս Նուբար փաշան իր խնամքի տակ առաւ հայ տաղանդաւոր արուեստագէտին, ուղարկեց Նիս բժշկուելու Կապդուրեկ, վերադարձաւ Պարիզ, տենչում էր ապրել մինչև իր հրաշակերտ արձանը Երևանում կանգնեցնէր, սակայն դաժան կեանքի զրկանքները փութացրին նրա մահը: Ցանկալի էր, որ կատարուած գործը չանհետանար և Աբովեանի արձանը կանգնեցուէր ու նրա պատուանդանի տակ արձանագրուէր և նրա ստեղծագործ թշուառ Տէր Մարուքեանի անունը պատշաճ մակագրութիւնով:

Ց. Նազարեան

«Ժողովրդի Ձայն»-ի խմբագրութիւնը շնորհակալութեամբ ընդունում է ձրի կամ վարձատրութեամբ Բագուի, Ռուսաստանի, Հիւսիսային Կովկասի և Արտասահմանի թերթեր:

ՎՐԱՍՏԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Արտակարգ նիստ 18 մարտի

Նախագահում է Արշ. Մխիթարեան (Հ. Ժ. Կ.):

Ա. Ժողովի բազմաթիւ հարցերից ամենից առաջ քննութեան է առնւում ծառայողների շտատի կրճատման, լիկվիդացիայի և մնացող ծառայողների ռոճիկների յաւելման խնդիրը:

Գործադիր մարմնի կողմից այս հարցի մասին զեկուցանում է Ն. Տէր-Մինասեան: Նա յայտնում է, որ Գործադիր մարմինը վաղուց մտադրութիւն է ունեցել ծառայողների թիւը Ազգային Խորհրդին ենթակայ զանազան հաստատութիւններում կրճատել. դրա համար կազմել է յատուկ յանձնաժողով, որն իր աշխատանքները վերջացնելով մասերի վարիչների փոխադարձ համաձայնութեամբ առաջարկել է Գործադիր մարմնին կրճատման նախագիծը: Գործադիր մարմինը ընդունելով այդ նախագիծը մի քանի փոփոխութիւններով, բերում է այն այսօր՝ Ազգային Խորհրդի հաստատութեան: Կրճատման են ենթարկւում սոյն մարտ ամսի 1-ից ընդամենը 31 ծառայող, որոնց հարկաւոր է բաւարարել լիկվիդացիոն վարձատրութեամբ մի ամսական ռոճկի սահմաններում, ի նկատի առնելով նրանց ծառայութեան տևողութիւնը: Այդպիսի լիկվիդացիայի համար հարկաւոր կը լինի ամենաշատը 8—9 հազար ռուբլի:

Ազգային Խորհուրդը առանց վիճաբանութիւնների հաստատում է Գործադիր մարմնի այս առաջարկը:

Ինչ վերաբերում է մնացած ծառայողների ռոճիկների յաւելման խնդրին, զեկուցանող Ն. Տէր-Մինասեան յայտնում է, որ այս խնդիրը վաղուց է յարուցուած ծառայողների կողմից, 1918 թ. նոյեմբեր ամսից, բայց մինչև այժմ չէ իրագործուել զանազան արգելառիթ հանգամանքների շնորհիւ: Այժմ Գործադիր մարմինը այս հարցն էլ մանրամասն քննութեան է ենթարկել, աշխատել է վերացնել մինչև այժմ տիրող ռոճիկների անհամաչափ բաշխումը միևնոյն կարգի ծառայողների մէջ, դրա համար ծառայողներին բաժանել է առանձին կատեգորիայի և նշանակել նրանց համար հաստատուն, նախկինի համեմատութեամբ աւելացրած ռոճիկներ: Աւելացման ընդհանուր տոկոսը չի անցնում 50-ից, որ ներկայ հանգամանքներում կարելի է շատ քիչ համարել: Գործադիր մարմնի առաջարկն է՝ հաստատել ռոճիկների նոր բաշխումը, գործադրութեան մէջ մտցնելով այն յունուարի 1-ից, սակայն միայն այն ծառայողների համար, որոնք շարունակում են իրենց ծառայութիւնը ներկայումս, ծառայողների թուի կրճատումից և լիկվիդացիայից յետոյ:

Այս հարցի մասին լինում են թեր և դէմ վիճաբանութիւններ: Առաջարկ է լինում բոլոր ծառայողներին հաւասար ռոճիկներ նշանակել, առանց նրանց բաժանելու կատեգորիաների, բայց այդ առաջարկը չի անցնում և անփոփոխ հաստատւում է Գործադիր մարմնի ներկայացրած նախագիծը իր բոլոր մանրամասնութիւններով:

Նախագծով որոշուած ամենաբարձր ռոճիկն է 1300 ռուբլի և 500 ռուբլի ամսական, որից սակայն հանւում է որոշ գումար 250—150 ռուբլի այն հաստատութիւններում, ուր ծառայողները սնունդ են ստանում:

Այնուհետև ժողովականների կողմից առաջարկ է լինում աւելացնել նաև ընտրովի պաշտօնեաների ռոճիկները: Որոշւում է Գործադիր մարմնի անդամներին և գլխաւոր վերահսկիչին ռոճիկ նշանակել 1500-ական ռուբլի, իսկ Ազգային Խորհրդի քարտուղարին՝ 1000 ռուբ.:

Բ. Գործադիր մարմնի կողմից Ա. Երզնկեան առաջարկում է Ազգային Խորհրդի ընտրութիւնների գործը փութացնելու համար ընտրել մի յատուկ յանձնաժողով և որոշ վարձատրութիւն նշանակել նրա անդամներին, որպէսզի ոչ միայն օրինագիծ մշակէ, այլ և ընտրութիւնները առհասարակ կազմակերպէ:

Ազգային Խորհուրդը ընդունելով այս առաջարկը, որոշում է կազմել ընտրական յանձնաժողով 4 հոգուց բաղկացած, իւրաքանչիւր ֆրակցիայից մի հոգի, նշանակել այդ յանձնաժողովի անդամներին ռոճիկ ամսական 1500 ռուբլի իւրաքանչիւրին, պարտաւորեցնելով որքան կարելի է շուտ ներկայացնել ընտրական օրինագիծը, որի համար հետևեալ նիստին ժամանակ որոշել և յանձնաժողովի անդամների ընտրութիւնները կատարել, քանի որ ներկայ ժողովին ֆրակցիաները պատրաստ չէին ընտրութիւն կատարելու:

Գ. Այնուհետև ժողովը զբաղւում է կուլտուրական աւտոնոմիայի օրինագծի մշակման հարցով: Գործադիր մարմնի կողմից զեկուցանում է Ա. Երզնկեան: Գործադիր մարմինը խնդրում է որոշ վարկ յատկացնել իրեն՝ կուլտուրական աւտոնոմիայի օրինագիծ մշակել տալու և Ազգային Խորհրդին ու նրա միջոցով Վրաստանի Սահմանադիր Ժողովին ներկայացնելու համար, քանի որ հայերը այժմ ներկայացուցչութիւն չունեն Սահմանադիր Ժողովում և այդ պարտականութիւնը բոլորովին ընկնում է Ազգային Խորհրդի վրայ:

Ազգային Խորհուրդը ընդունում է Գործադիր մարմնի առաջարկը և այդ նպատակն իրագործելու համար որոշում է Գործադիր մարմնին յատկացնել մինչ 10 հազար ռուբլի:

Դ. Զեկուցում է տալիս Բաթումի Ազգային Խորհրդի ներկայացուցիչ Գրիգորեան Ամերիկացիների բերած 300 հազար փութ ալիւրի և 11 հազար փութ այլ ապրանքի մասին, որ թէև Հայաստանի Հանրապետութեան համար է, բայց Բաթումում յատկացնում են և ուրիշներին: Բաթումի ներկայացուցիչը խնդրում է միջոցներ ձեռք առնել դրա դէմ և դժգոհութիւն է յայտնում, որ իրենց նամակները Գործադիր մարմնին մինչև այժմ անհետևանք են մնացել:

Գործադիր մարմնի կողմից բացատրութիւններ են տալիս Ե. Տէր-Մինասեան և Ա. Երզնկեան, որոնց տուած տեղեկութիւններից երևում է, որ գործն իսկապէս վերաբերում է ոչ թէ Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդին, այլ Հայաստանի կառավարութեանը և նրա դիւանագիտական ներկայացուցչին, որ Գործադիր մարմինը ոչինչ ձեռնարկել չէր կարող, քանի որ Բաթումից ստացուած նամակի վերջում «յաւելուածով» տեղեկացւում էր, թէ ստացուած պարէնից մօտ 120 հազար փութ տրւում է անգլիական կոմենդանտին փոխարինաբար 5 օրով, բայց եթէ պէտք է լինի, Գործադիր մարմինը կարող է աջակցել պ. Գրիգորեանին իր միտքն իրագործելու:

Ժողովը առաջարկում է Գործադիր մարմնին ըստ կարելոյն նպաստելու Բաթումի ազգ. խորհրդի ներկայացուցչին:

Ե. Ախալքալաքի Հայրենակցական Միութեան կողմից խօսք են առնում պ.պ. Ա. Տէր Գրիգորեան և Պ. Աբէլեան, որոնք յարձակւում են Գործադիր մարմնի վրայ նրա «դանդաղկոտ»ութեան և Ազգային Խորհրդի վճիռները Ախալքալաքցիների վերաբերութեամբ չկատարելու համար:

Գործադիր մարմնի կողմից բացատրութիւններ են տալիս Ե. Տէր-Մինասեան և Ա. Երզնկեան, որոնցից վերջինը մի ընդարձակ ճառով հերքում է բոլոր մեղադրանքները և ցոյց տալիս, որ շատ որոշումներ անհնարին է եղել կատարել դրամ չլինելու պատճառով, ուրեմն Գործադիր մարմնից միանգամայն անկախ, որ շարունակ խօսելու փոխարէն լաւ կը լինի Հայրենակցական Միութեան անդամները բարեհաճէին իրենց հայրենակիցների հետ վերադառնալ հայրենիք և այնտեղ նրան օգնել, փոխանակ ժամանակ խլելու Գործադիր մարմնից և նրա գործերը դրանով աւելի ևս «դանդաղեցնելու»: Բացատրութիւններից պարզւում է նաև, որ Ախալքալաքցիներին Գործադիր մարմինը օգնել կարող է միայն Հայաստանի կառավարութիւնից դրամ ստանալուց յետոյ, որի համար արդէն Երևան են մեկնել Ազգային Խորհրդի վճռով պ.պ. Դ. Դաւիթխանեան և Ան. Ստամբոլցեան:

Առաջարկելով Գործադիր մարմնին օգնելու Ախալքալաքցիներին ըստ չափու հնարաւորութեան, Ազգային Խորհուրդը վերջապէս քննում է

Զ. Սուխում ներկայացուցիչ ուղարկելու հարցը և այս խնդրի լուծումն ու իրագործումը յանձնարարւում է Գործադիր մարմնին:

Օրակարգի միւս հարցերը ուշ լինելու պատճառով յետաձգւում են ուրբաթ օրուայ հերթական նիստին:

Ժողովը փակւում է ժամը 10-ին:

Թղթակից

ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԸ

III

Հագուստեղէն եւ վերմակեղէն

Ամենքիս համար էլ պարզ է և հասկանալի, թէ որքան դժուար և ինչ թանկ գներով է ձեռք բերւում սպիտակեղէնի և վերնաշորերի՝ կտաւի կտորներ. Նոյնը կարելի է ասել նմանապէս կօշկեղէնի մասին. Ահա թէ ինչու համար է որ բացի մի երկու որբանոցից մնացած որբանոցներում նկատելի չափով զգացւում է գլխաւորապէս ճերմակեղէնի պակասը: Թէև Կոմիտէն անցեալ ամիսներում շուկայից գնել է սպիտակ կտաւներ զարհուրելի գներով, սակայն հաստատապէս կարելի է ասել, որ Կոմիտէն ստիպուած կը լինի դեռ շատ ու շատ գնումներ կատարելու, որբերի ճերմակեղէնների հարցը բարելաւելու համար*):

Ինչ որ ասացինք ճերմակեղէնների մասին, նոյնը չի կարելի ասել վերնաշորերի նկատմամբ: Կոմիտէի գաղթականական բրդի գործարանից ստացուած մեծաքանակ բրդի դիմացկուն կտորներից պատրաստել է առայժմ տափատ և վերարկու բոլոր որբերի համար, թէև կտորները բոլորովին սպիտակագոյն են, ուրեմն շուտ աղտոտւող և մի քիչ էլ ժամանակից ուշ է բաժանուել, այսինքն դեկտեմբերից սկսած, երբ արդէն ցուրտ եղանակները սկսուել էին: Որբերը բոլորն էլ ստացել են ոտնամաններ (չուստեր), պատրաստուած որբանոցային արհեստանոցում, որոնց պատրաստողները հենց իրենք որբերն են: Մի քանի որբանոցներում, ուր որբերը մեծ են, դեռ չեն ստացել գուլպաներ, որովհետև գուլպաները գործուած են խիստ փոքրիկ և գլխաւորապէս փոքրիկների համար, իսկ մեծերը մնացել են առանց գուլպաների կամ բոլորովին մաշուած գուլպաներով:

Որբանոցների հիւանդանոցներ եւ առողջապահութիւն

Ամեն մի որբանոցում կայ հիւանդների սենեակ կամ սենեակներ, համարեա թէ կից որբերի ննջարաններին, ուր տեղափոխուելու են թեթև հիւանդ որբերը իրենց ննջարաններից: Վերջին երեք ամիսներում, երբ տիֆը տարածուեց Թիֆլիսում ամենուրեք, զերծ չմնացին նաև Կոմիտէի մի քանի որբանոցները այդ հիւանդութիւնից: Եւ ահա թեթև հիւանդներին յատկացրուած սենեակները փոխուեցին տիֆային հիւանդանոցների, հենց որբանոցներում առողջ երեխաների սենեակների կողքին: Հակառակ դրան պէտք է ասել, որ Կոմիտէի որբանոցներում մահացութեան դէպքեր համարեա թէ չեն պատահել: Դրա պատճառը սխալ կը լինէր վերագրել բժիշկների և նրանց ծառայողների ժրաջան աշխատանքին, այլ Կոմիտէի ձեռք առած արտակարգ միջոցներին, առատ սնունդին և դեղորայքին: Դրանով ես չեմ ցանկանում նսեմացնել բժիշկների աշխատանքները, բայց մի բան ակներև է. դա այն է, որ բժիշկները ստիպուած են ոչ թէ նայել միայն մի հիւանդանոցի հիւանդներին, այլ մի քանիսին: Եթէ մեղաւոր չեն բժիշկները, բայց և այնպէս իր կոչման բարձրութեան վրայ չէ կանգնած հիւանդանոցների գլխաւոր հսկիչ և պատասխանատուն՝ բժիշկ Է-ն: Նա շատ քիչ անգամներ է բարեհաճում այցելել որբանոցների հիւանդանոցները և այցելելիս գլխաւորապէս ուշադրութիւն է դարձնում արտաքինին, մաքրութեան:

Համեմատած ուրիշ կոմիտէների և ընկերութիւնների որբանոցների հետ, իր բոլոր պակասութիւնների հետ Ամերիկ. Կոմիտէի որբանոցները առողջապահական տեսակէտով անպայմանօրէն աւելի բարձր են կանգնած:

Ազատ

---

*) Վերջին պահուն հաստատ աղբիւրից իմացանք, որ Կոմիտէն Ամերիկայից ստացել է բաւականաչափ շորեղէններ և ուրիշ պէտքական առարկաներ որբերի համար: Ա.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Լուսաւորութեան պ. Մինիստրին

—

Զեկուցագիր.

Հայաստանի քաղաքական, իրաւական և տնտեսական գործերն ամրապնդելու և կարգաւորելու աշխատանքների հետ, ինչ ասել կուզէ, որ ժողովրդի մտաւոր-կուլտուրական առաջադիմութեան վերաբերող գործերն էլ իրենց առանձին հոգսերն ունեն, և այդ հոգսերն ամբողջապէս ծանրանում են լուսաւորութեան մինիստրութեան վրայ: Այն խնդիրը, որի մասին պատիւ ունիմ խօսելու իմ զեկուցագրի մէջ, թերևս համարուի վաղաժամ, բայց ես գտնում եմ, որ գործեր կան, որոնք նախնական աշխատանքներ կատարելու անհրաժեշտութիւնն ունեն, և որոնցով զբաղուելը ոչ միայն վաղաժամ չէ, այլ և շատ անյետաձգելի է:

Չը խօսելով այն մասին որ հայ պետականութեան ստեղծման դըժուարին գործը հրամայականօրէն պահանջ է առաջացնում պետութեան կենտրոնավայրում ունենալ կարևոր գրքերի մի հաւաքածու, եթէ Հայաստանում համալսարան է բացուելու (որը միանգամայն կասկածից դուրս է), հետևապէս այդ համալսարանից ոչ շատ հեռու պէտք է հիմնուի մի անկախ հարուստ և ճոխ ազգային մատենադարան. առանց այդպիսի մի հիմնարկութեան, առանց գիտական մթնոլորտ ստեղծելու դժուար կը լինի երևակայել համալսարանի կամ միւս բարձր և մասնագիտական դպրոցների գոյութիւնը, ինչպէս և պետական խնդիրներով, գիտութեամբ ու բանասիրութեամբ պարապողների դրութիւնը: Պետական կենտրոնում պետական կենտրոնական գրադարան ունենալու խնդիրն այնքան անկասկած է, և Ձեզ համար, պ. մինիստր, այնքան պարզ, որ ես կարևոր չեմ համարում իմ զեկուցման մէջ նոյնիսկ ծանրանալ նրա անհրաժեշտութեան վրայ: Եւ ուրեմն, երբ Հայաստանի քաղաքական ու մտաւոր կենտրոնում, մի գեղեցիկ օր, կը կանգնեցուեն համալսարանի և այլ կուլտուրական հաստատութիւնների շէնքերը, և որոնք կարող կը լինեն անմիջապէս գործի անցնել, կառուցուող մատենադարանի շէնքը կը մնայ դատարկ, եթէ օր առաջ, այժմեանից չը հոգացուի, չը կազմակերպուի գրքեր, լրագիրներ հաւաքելու գործը: Մի հանգամանք, որի վրայ պէտք է դարձնեմ Ձեր բարեհաճ ուշադրութիւնը, այն է՝ որ ներկայումս հայ ժողովրդի տեղափոխութիւնների, գաղթումների և մանաւանդ ապրուստի թանգութեան պատճառով հրապարակում, յաճախ շատ աննշան գներով վաճառքի են հանւում ամեն տեսակ գրքեր, կարևոր և հազուագիւտ հանդէսներ, պատկերներ և այլն, և այդ բոլորը մեծ մասամբ ընկնում են օտարների կամ սպեկուլեանտների ձեռքը: Վերջին շաբաթներում Թիֆլիսում վաճառուեցին նաև մի քանի մասնաւոր գրադարաններ:

Ահա այս ամենը ի նկատի ունենալով, ես, որպէս մէկը հայ գրական աշխատաւորներից, պատիւ ունիմ Ձեզ զեկուցելու, պ. մինիստր, և խոնարհաբար խնդրելու միաժամանակ, որ դուք լուսաւորութեան մինիստրութեան հերթական և մօտակայ խնդիրներից մէկը դարձնէք Հայաստանի Պետական կենտրոնական գրադարան, կամ Ազգային Մատենադարան հիմնելու գործը, յանձնելով այդ գործի կազմակերպութիւնը Ձեր կատարեալ վստահութիւնը վայելող մի կարող անձնաւորութեան: Այդ անձնաւորութիւնը ունենալու է հետևեալ իրաւունքները Ձեր հաստատութեամբ և պաշտօնական վաւերացումով.

ա) Գլխաւոր վայրը կամ կենտրոնատեղին գրքերի և բոլոր նիւթերի հաւաքելու համար ժամանակաւորապէս ընտրել Երևան կամ Վաղարշապատ քաղաքը. և վարձել մի տուն, որտեղ կը լինի պահեստը և դիւանը:

բ) Գործակալութիւններ կամ ներկայացուցիչներ ունենալ առայժմ Թիֆլիսում և Բաքւում, լիազօրելով այդ գործակալներին տեղական մասնաժողովներ կազմել իրենց նախագահութեամբ: Այդ գործակալները մշտական յարաբերութեան մէջ են լինելու կենտրոնի հետ, իսկ կենտրոնը՝ կառավարութեան հետ:

գ) Յայտարարել Հայաստանի և օտար պետութիւնների սահմաններում հրատարակուող հայ թերթերում, որ բոլոր հայ խմբագրութիւնները, հրատարակիչներն ու հեղինակները հնարաւոր չափով պարտադիր լինեն իրենց հրատարակութիւններից ուղարկել 2-ական օրինակ, ինչպէս Ռուսաստանում ընդունուած էր նախ քան յեղափոխութիւնը, որ ցենզուրական կոմիտէներին ուղարկւում էր մինչև 10 և աւելի օրինակներ:

դ) Կազմակերպել նուիրաբերութիւններ ընդունելու գործը թէ գրքերով և թէ դրամով, դիմումներ անել այդ նպատակով թէ մասնաւոր անձերի և թէ ազգային հաստատութիւնների:

Ազգային Մատենադարանի հեռաւոր և վերջնական նպատակը լինելու է իր յարկի տակ հաւաքել անպայման և անխտիր բոլոր հայերէն հրատարակութիւնները, գրքեր, լրագիրներ, հանդէսներ, քարտէզներ, տեղագրեր և ամեն կարգի բրօշիւրներ, նոյնիսկ օրացոյցներ և գրացուցակներ՝ որտեղ և որ թուականին էլ տպագրուած լինեն. (ինչպէս որ Վիեննայի Մխիթարեանների գրատունը), իսկ առայժմ ես ենթադրում եմ գրքեր հաւաքելիս պէտք է առաջնորդուել հետևեալ ծրագրով.—

1. Պետական և միջազգային իրաւունքին վերաբերող ամբողջ գրականութիւնը, բոլոր լեզուներով.
2. Հանրագիտական բառարաններ և զանազան տեղեկատու (справочныя) գրքեր:
3. Արևմտա-եւրոպական պետութիւնների օրինագրքերը:
4. Ժողովրդական լուսաւորութեան և դպրոցական գրականութիւն.
5. Առհասարակ պետական կեանքի բոլոր ճիւղերին վերաբերող գրականութիւն.
6. Բոլոր հայ պարբերականները.
7. Ազգերի պատմութիւն, հասարակագիտութեան և սոցիալական կեանքին վերաբերող գրականութիւն.
8. Դրական և վերացական գիտութիւններ.
9. Հին և նոր ազգերի ընտիր մատենագրութիւն (կլասիքներ).
10. Ամբողջ Հայոց գեղեցիկ գրականութիւնը.
11. Հայոց պատմութեան, գրականութ. պատմութեան, հայ լեզուի, բանասիրութեան, մի խօսքով հայագիտական բոլոր հայերէն գրքերը.
12. Օտար լեզուներով այն կարևորագոյն հրատարակութիւնները, որոնք վերաբերում են հայ կեանքին, քաղաքակրթութեան, հայ բանասիրութեան և հայ դատին,
13. Կովկասագիտութեան, մեր հարևան ազգերին և մօտիկ արևելքի ժողովուրդներին վերաբերող գրքեր՝ թէ հայերէն և թէ օտար լեզուներով.
14. Հայոց թատերական գրականութիւնը (մեծ մասամբ անտիպ) և ամբողջ հայոց երաժշտական գրականութիւնը:
15. Տպագրուած պատկերներ, գրաւիւրներ, քարտէզներ, ալբոմներ, ինչպէս և լուսանկարներ՝ հայ և Կովկասեան կեանքին, պատմութեան և արուեստներին վերաբերող:
16. Հայ նշանաւոր հեղինակների տպագրուած աշխատութիւնների ձեռագիր օրիգինալները, ինչպէս որ օտար ազգերի մեծ գրադարաններում պահում են իրենց մեծ գրողների նման ձեռագրերը.
17. Ձեռագիր նիւթեր անյայտ հեղինակների վերջին դարերից.
18. Նշանաւոր հայ մարդկանց նամակներ.

Ծանօթացնելով Ձեզ, պ. Մինիստր, իմ նախագծի գլխաւոր կէտերը, նորից եմ խնդրում ընթացք տալ այս գործին, Ձեր կողմից նշանակելով գործը կազմակերպող և ղեկավարող անձնաւորութեան, մանաւանդ որ իմ կազմած նախահաշուով շատ մեծ ծախսեր չի պահանջելու կառավարութիւնից, մինչդեռ իրական արդիւնքը, ես հաւատացած եմ, դրեթէ կարելի կը լինի հաւասարեցնել արուած ծախսերին:

Այս զեկուցագրի հետ պատիւ ունիմ ներկայացնելու Ձեզ մօտաւոր նախահաշիւ, կազմած 9 ամսի համար (1919 թ. ապրիլ-դեկտեմբեր) և հասցրած մինիմալ չափի:

Գարեգին Լեւոնեան

Թիֆլիս, 5 մարտի.

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿ.

ՈՎՍԱՆՆԱ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ՅՕԴՈՒԱԾԸ

—

Հայ երաժշտագէտ օրիորդ Ովսաննա Տէր-Գրիգորեանը գերմանական «Kaukasiche Post» թերթում (№ 8) տպագրում է մի շարք յօդուածներ՝ «Երաժշտութիւնը Հայոց գրականութեան մէջ», որը հետաքրքրական է ոչ միայն գերմանական մամուլի, այլ և հայերիս համար:

Շնորհալի օրիորդը իր բեղմնաւոր գրչով և մանրակրկիտ ուսումնասիրութեամբ հարստացնում է և զարկ տալիս ոչ միայն հայ երաժշտութեան, այլ և երաժշտութեան տեսականին:

Գերմանական թերթում տպուած յօդուածը բաժանուած է մի քանի մասերի. օր. առաջին յօդուածում երաժշտագէտը բազմաթիւ օրինակներ է բերում հայ գրականութիւնից, թէ ինչպիսի դեր է խաղացել երաժշտութիւնը հայ կեանքի վերաբերեալ, հայ կուլտուրայի զարգացման:

Երաժշտութիւնը սգահանդէսներին, հարսանեաց հանդէսներին, եկեղեցական տօներին, մենամարտութեան ժամանակ, գիւղացին զանազան աշխատանքներ կատարելիս, հովուական երգեր և այլն:

Գործիքներից՝ սաղ, սրինգ (արիմինիսի փլեյտա) հովուական տիկ կամ պարկապզուկ, դուդուկ (արիմինիս որոյ), շուի և այլն:

Երկրորդ մասում գտնում է, որ հայ գրականութիւնը շատ բնորոշ նմուշներ ունի հայ երաժշտութեան երեք տեսակից էլ՝ ժողովրդական, գեղջկական, աշուղական և եկեղեցական:

Երրորդ մասում ժողովրդական երաժշտութեան վերաբերեալ բերուած է Ալ. Ահարոնեանի «Սև օրերից»: Երգիչ Մուսոյին ամենքը սիրում են: Սակայն նրան սիրում են ոչ թէ նրա գեղեցկութեան համար, այլ նրա գրաւիչ ձայնի համար:

Ահա գեղջուկ երաժիշտը հարսանիքի ժամանակ, նրանից յետոյ նա երևում է քրդերի օրաներում: Եւ լսում են նրան անվերջ, լսում են ոչ իբրև երգիչ, այլ իբրև սրնգահար:

Արևելքում մեր հայ երգիչները շատ սիրուած են: Շատ անգամ նրանք լինում են պարսկական, քրդական բէգերի մօտ, որոնք առանձին հպարտութեամբ համարում են նրանց իրենց երգիչները:

Այնուհետև երաժշտագէտը որոնումներ է անում Փափազեանի գրական աշխատանքներում և բերում օրինակներ: Պարկապզուկի նկարագրութիւնը «Լաւր դա լուր»-ի հետաքրքրական օրինակը, որտեղ նկարագրուած է հովուի երաժշտութեան ազդեցութիւնը ոչխարների վրայ:

Աշուղական. Աշուղ խօսքը ծագում է պարսկական-սիրահար իմաստից. Նրանց ամեն մի աշուղը երգահան, բանաստեղծ ու նուագող էր:

Հին ժամանակ մեր պապերը երգել են թագաւորների կեանքը, հանդիսաւոր երևոյթները բամբիռի նուագակցութեամբ: Ոմանք գտնում են, որ այդ գործիքը պիտի լինէր կոստանէանների նման, ոմանք էլ (օր. պրոֆ. Էմինը՝ լարային) համարում են այն լարային:

Ըստ Մովսէս Խորենացու պատմութեան՝ հռչակաւոր են եղել Գողթան գաւառի երգիչները: Ըստ Հայր Ալիշանի՝ հայ աշուղական երգերը 12-րդ դարից, իսկ աւելի ճիշտը 15—16-րդ դարից:

Մկրտիչ Նաղաշ, Յովհաննէս Թուլկուրանցի, Մկրտիչ Տարոնացի և այլն, նրանց թիւը շատ մեծ է 18-րդ դարում. իսկ 18-րդ դարից յետոյ նրանց թիւը պակասում է:

Վալադեանի «Թագմական պատկերների» մէջ նկարագրուած են՝ Սեգեան, Մահուրի, Բայաթի, Թաստ և այլն. դրանք պարսկական ռապսոդիաներն են, որոնք շատ մեծ նմանութիւն ունեին հնդկական ռապսոդիաներին, ինչպէս ձեւով, նոյնպէս և կադենցիաներով:

Յօդուածը ամբողջապէս բաւական հետաքրքրական է և ցանկալի է նոյն նիւթի բնագիրը տալ մեծամասնօրէն մեր հայ ընթերցողներին:

ԱՌԵՒՏՐԱ-ԱՐԴ. ԿԵԱՆՔ

Ալիւրի պակասութիւնը

Մինչև վերջին ժամանակներս Ռուսաստանից ստացւում էր սպիտակ ալիւր: Այդ ալիւրը գլխաւորապէս բերում էին ծովով Օդեսայից, իսկ մասնաւորապէս ստացւում էր Ռոստովի ճանապարհով: Թիֆլիսի ազգաբնակութեանը բաւարարում էր գլխաւորապէս Ռուսաստանից ստացւող հացը և պէտք է յիշել և այն, որ այդ հացը գոհացնում էր տալիս միայն առօրեայ պահանջներին, իսկ խոշոր պաշարներ ունենալու հնարաւորութիւն չէր տալիս: Սակայն Թիֆլիսին ալիւր մատակարարելու պայմանները վերջերս շատ խիստ կերպով փոխուեցան: Ռուսաստանից բոլորովին դադարեց ալիւրի ստացումը, մինչդեռ առաջ իւրաքանչիւր շոգենաւով ալիւր էր ստացւում Վրաստանի նաւահանգիստներում. Այդ հանգամանքը առիթ եղաւ թէ բերովի և թէ տեղական ալիւրների գների բարձրանալուն: Սպիտակ ալիւր Թիֆլիսում համարեա չկայ և, ըստ հացթուխների հաւաստիացումների, բաւական է միայն մի քանի օր: Այդ ալիւրի գները հասել են մինչև 380 ռուբլի փութը, (առաջ 230—240 ռ.): Բոկոլը (սպիտակ ալիւր 2-րդ տեսակի) վաճառւում է փութը 290 ռուբլի (երկու շաբաթ առաջ 190—200 ռուբլի): Համեմատաբար դրան թանգացել է տեղական ալիւրը, որպիսին փոքր քանակութեամբ ստացւում է Կախեթիայից, ուր պաշարը նոյնպէս սահմանափակ է: Կախեթի ալիւրը ներկայումս վաճառւում է 230 ռ., մինչդեռ մի փոքր առաջ նա ստացւում էր 120—140 ռ. փութը: Աւելացել է նաև սիմինդրի ալիւրի գինը, որ հասնում է մինչև 130 ռ. փութը (առաջ 70 80 ռ.), Գարու ալիւրին վճարում են մինչև 150 ռ. (առաջ 50 ռ.).

Պէտք է նկատել, որ Թիֆլիսում կազմակերպուել է հացթուխների կօօպերատիւ «Հաց» անունով, որը նպատակ է դրել առանձնապէս ալիւր գնել, որպէս զի ազդեցութիւն անի կարմիրին ալիւրի գինը իջեցնելու: Նոր ընկերութեան այսպիսի նպատակը կարելի է ողջունել:

Ապրանքների փոխանակութիւն Ադրբէջանի հետ

Անդրկովկասեան կօօպերատիւների միութիւնը նորերս Բաքու ուղարկեց իր վարչութեան անդամներից մէկին ապրանքների փոխանակութեան համար: Վրաստանից կօօպերատիւները Բաքու են ուղարկել թէյ, կաղամբ, ծխախոտ և ուրիշ մթերքներ: Բաքուից պէտք է ստացուի բրինձ և գլխաւորապէս նաւթ:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ
Հրատարակիչ՝ Հայ Ժողովրդական Կուսակցութիւն

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ“-ի
գրասենեակում վաճառւում է նոր հրատարակութեամբ լոյս տեսած
ԳԷՈՐԳ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ
ՁԵՄՍՏԻՈՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ և ՎՐԱՍՏԱՆՈՒՄ
ԳԻՐՔԸ
Գինը 50 կոպէկ:
Դիմել գրասենեակ՝ Головинскій пр. № 41. 0—34

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒ ՀԱՇՒԱ-ՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Հայերի մէջ առևտրական կրթութիւն տարածող Կովկասեան ընկերութեան:
Նիկոլայեւսկի № 36,
0—65 Տնօրէն՝ Գ. Կ. Տէր-Դաւթեան

Տպարան «Մշակ»—կոոպ. Մ. Էփրիկեան և Յ. Մարիկեան, Լօրիս-Մելիքեան փող., № 22.